


ՍՈՒՍԱՆՆԱ ՏԻՈՅԱՆ. Հայերենի տերմինագիտության հարցեր, Երևան, ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2016, 140 էջ:



Հայերենի տերմինագիտության հարցերին է նվիրված ՀՀ ԳԱԱ Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի ավագ գիտաշխատող, բ. գ. թ. Սուսաննա Տիոյանի՝ 2016 թ. լույս տեսած մենագրությունը: Այն տպագրվել է ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ, պատասխանատու խմբագիրն է բառարանագրության բաժնի վարիչ, բ. գ. թ. Ա. Ս. Գալստյանը:

Մենագրության հեղինակ Ս. Տիոյանը հիմնականում քննարկում է արդի հայերենի տերմինային այն համակարգերը, որոնք ձևավորվել են վերջին տասնամյակներում և աննախադեպ զարգացում են ապրում: Այդ գործընթացում մեծազույն դեր ունի գրական արևմտահայերենը: Նա արևելահայերենի ու արևմտահայերենի տերմինային համակարգերի համեմատական քննությամբ պարզաբանում է, թե ինչպես են դրանք ներգործում միմյանց վրա և նպաստում հայոց լեզվի բառապաշարի համալրմանն ու հարստացմանը: Հեղինակը դիտարկում է նաև հայերենի տերմինակազմության զարգացման հեռանկարները:

Հարյուր քառասուն էջի շրջանակում ներկայացվում է հետաքրքիր մի աշխատանք՝ իր երկու գլուխներով:

Առաջին գլուխը վերաբերում է ժամանակակից հայերենի տերմինների բառային կազմի ուսումնասիրության հայեցակետերին՝ նկատի ունենալով հանրալեզվաբանական, գրական և ժողովրդախոսակցական լեզուները, լեզվական իրավիճակները, հասարակաբանության դրսևորումները, բարբառները, եղած տերմինների ու նոր տերմինների պատկերը, բերում է օրինակներ բառապաշարի նշված շերտերից:

Երկրորդ գլխում Ս. Տիոյանն անդրադառնում է հայերենում կիրառական տնտեսագիտության և իրավաբանական տերմիններին, ինչպես նաև՝ համակարգչային տերմինաբանության ձևավորմանը, կառուցվածքային ու իմաստաբանական վերլուծությանը: Հատկապես անդրադառնում է համակարգչային տերմինաբանության զուգաձևություններին ու դրանց վերաց-

ման հիմնախնդիրներին՝ ներկայացնելով նաև արդի հայերենի տերմինաբանության զարգացման հեռանկարը: Հեղինակն օգտագործում է վաթսուներկու անուն գիտական գրականություն, ներկայացնում արևելահայերենի և արևմտահայերենի տերմինային համակարգերի համեմատական քննություն, տալիս անգլերեն-արևելահայերեն-արևմտահայերեն տերմինային ցանկեր՝ հանգելով մի շարք եզրակացությունների:

Ս. Տիոյանը կիրառական տնտեսագիտության, իրավաբանական և համակարգչային տերմինաբանության բառապաշարները՝ որպես հարափոփոխ, շարունակաբար համալրվող ու զարգացող համակարգեր, ուսումնասիրում, ենթարկում է բառակազմական և իմաստային քննության՝ բերելով ժամանակակից գիտության համապատասխան ոլորտներին համահունչ հետաքրքիր օրինակներ: Առանձնացնում է նոր տերմինները, դասակարգում ըստ գործածության ոլորտների, ըստ առանձին գիտաճյուղերի, բնութագրում ըստ իմաստային դրսևորումների, դիտարկում կայուն կապակցությունները և նկատում, որ տերմինաբանությունը նույնպես գտնվում է անընդհատ փոփոխության ու զարգացման գործընթացում: Ընդգծում է՝ նոր տերմինները փոխարինելու են գալիս հներին, վերացնում են համակարգում առաջացած անհամապատասխանությունները, հակասական երևույթները, սակայն, այնուամենայնիվ, անընդհատ առաջանում են իրենց լուծմանը սպասող նորանոր խնդիրներ:

Կիրառական տնտեսագիտության տերմինների հանգամանակից ուսումնասիրությունը հանգեցնում է այն եզրակացության, որ տվյալ տերմինահամակարգում իշխող օտար եզրույթները պետք է ճշգրտել, թարգմանել, բառակազմական շղթայում եղած բացթողումները և սխալները շտկել, լրացնել:

Իրավաբանական տերմինների կառուցվածքային-իմաստաբանական վերլուծություն կատարելիս հեղինակը նկատում է, որ վերջին տասնամյակում բժշկագիտության, երաժշտագիտության և մշակութաբանության համեմատ տնտեսագիտության, հաշվողական համակարգերի և իրավաբանական գիտական ոլորտներն ամենաարագ զարգացող ճյուղերն են, որոնց բազմաբնույթ, հարատև աճող տերմինների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ժամանակակից հայերենում գործում է եզրույթների միտքը ճշգրտորեն արտահայտելու ձգտումը, այսինքն՝ անկախ բառային միավորների քանակից, ի վերջո, ստացվում է մեկ բարդ բառ-տերմին: Այդ են վկայում բառակազմությանը նվիրված գիտական բոլոր աշխատությունները՝ Ս. Աբեղյանից սկսած:

Շուրջ երկու հարյուրի հասնող իրավական ոլորտների երեք հազար հինգ հարյուր բառային միավորները հեղինակը խմբավորում է ըստ բուն իրավա-

բանական, նաև հարակից ու ոչ հարակից գիտաճյուղերի միավորների, նկատում, որ տերմինային ցանկերում կան բառեր, որոնք համատեղում են մի քանի գիտաճյուղեր: Օրինակ՝ անիշխանություն-դատաիրավական, քաղաքական-վարչական, ապառակավորում-տնտեսագիտական-իրավաբանական-քաղաքական, օրենսդրություն, օրինագիծ-իրավական-քաղաքական-վարչական և այլն: Կան նաև համընդհանուր գործածության բառեր, ինչպես՝ աղմուկ, կոիվ, վեճ, խաղ, հաշիվ, ճառ, ելույթ, առիթ, վճարող, օգուտ, նպաստ և այլն: Վեր են հանվում նաև պարզ, ածանցավոր, նախածանցավոր, վերջածանցավոր, բարդ, բարդածանցավոր տերմինները, այնուհետև՝ բաղադրյալ կազմությունները, պարզում, որ երկանդամ իրավաբանական տերմինների իննսուն տոկոսն ունեն «Ա+Գ կադապարը», հետո անդրադառնում է նաև բազմաբաղադրիչ՝ եռանդամ, քառանդամ ու ավելի մեծ կառույց ունեցող տերմիններին:

Ս. Տիոյանը բառակազմական-իմաստաբանական վերլուծության է ենթարկում նաև հայերենում ձևավորվող համակարգչային տերմինաբանությունը, տալիս է դրանց իմաստային-կառուցվածքային առանձնահատկությունները: Հեղինակը համակարգչային տերմիններով սկսել է զբաղվել դեռևս 2007 թ.՝ նպատակ ունենալով ուսումնասիրելու և վերլուծելու հատկապես ինտերֆեյսի (միջերեսի) հայերեն տարբերակը: Աշխատության մեջ նա օգտագործում է վեց և ավելի աղբյուրից ընտրած համակարգչային տերմիններ՝ բացահայտելու այդ համակարգում առկա իմաստային-ընտրողական, կառուցվածքային վերլուծական խնդիրները: Թեև այս ոլորտում մասնագետները հսկայական աշխատանք են կատարել՝ ստեղծելով երկլեզվյան, բազմալեզվյան բառարաններ, դասագրքեր, բառացանկեր, ուղեցույցներ, այլևայլ ձեռնարկներ, այնուամենայնիվ, խնդիրը մնում է չլուծված. հեղինակները օտար տերմինների դիմաց երկու և ավելի հայերեն ու հայատառ համարժեքներ են դնում՝ ընտրությունը թողնելով ընթերցողին: Աշխատության հեղինակը գտնում է, որ անհրաժեշտ է կատարել լեզվաբանական լուրջ ուսումնասիրություն, որի հիման վրա եղած տարբերակներից կարելի կլինի առանձնացնել մեկը կամ առաջարկել նոր տարբերակ:

Վերջին երկու-երեք տասնամյակներում տեղի ունեցող ինֆորմացիոն-տեխնոլոգիական աննախադեպ առաջընթացի շնորհիվ նոր ստեղծվող և իմաստ արտահայտող հազարավոր բառեր են թափանցում թե՛ արևելահայ և թե՛ արևմտահայ լեզուների բառապաշար: Եթե արևելահայերենը նոր տերմինների հարցում ազատ է, ապա արևմտահայերենը բժախնդիր է. արևմտահայ մտավորականության անխոնջ անհատների ջանքերի շնորհիվ լեզուն կարողանում է զերծ մնալ օտարամուտ ազդեցություններից, յուրա-

քանչյուր փոխառության դիմաց դնում է բնիկ հայկական համարժեքը: Հեղինակը գտնում է, որ, այդուհանդերձ, չպետք է ընկնել ծայրահեղությունների մեջ, որովհետև միշտ չէ, որ կարելի է խուսափել փոխառություններից: Մեջբերելով անվանի լեզվաբանների տեսակետները՝ ընդգծում է, որ չկա որևէ անխառն լեզու, նույնիսկ իտալերենի, ֆրանսերենի նման լեզուները: Ի վերջո փոխառություններն էլ իրենց հերթին կարող են և հարստացնում են ցանկացած լեզվի բառապաշար: Մանրամասնորեն ճշգրտված, ոլորտայնացված տարբերակներով փոխառություն է կատարվում նաև արևմտահայերենից արևելահայերեն և հակառակը, այսպես՝

ա. լեզվի մեջ արդեն գոյություն ունեցող տերմիններ՝ արտոնել, գերտերություն, գաղտնագրերձել, ծածկաբառ, հրամանաշար, ստեղնաշար, սակարկել, սեղմագիր, իրազեկ, նպաստառու, վիճակահարույց, չարաշահում և այլն,

բ. նորագույն տերմիններ՝ նմանակ /analog/, ասեղնատպիչ, հեռապատճեն, միջերեսակ /interface/, ցուցան, թվանշագրիչ /scanner/, ընտրանք և այլն:

Արևմտահայերենով կազմված այս ցանկերն արևելահայերենի բառապաշարի հարստացման առաջին և հիմնական աղբյուրն են, գրում է հեղինակը, քանի որ կերտված են նույն լեզվանյութից, լեզվամտածողական նույն սկզբունքներով ու հարազատ բառակազմության «իննայողական» նույն հայեցակետերին (էջ 105): Արևմտահայերեն են թափանցել մի շարք արևելահայերեն բառեր, ինչպես՝ բեռնաթափել, արտահերթ (նիստ), հավատարմատար, փոխշահավետ, մրցունակ, տարադրամ և այլն: Լեզվական այսպիսի փոխներթափանցումները նպաստում են լեզուների փոխհարստացմանը, փոխհամալրմանը, լեզվակիրների փոխըմբռնմանը, նաև՝ տերմինաբանության զարգացման յուրօրինակ առաջընթացին:

Ս. Տիոյանը գտնում է, որ արևմտահայերենի զարգացման և կանոնարկման գործընթացը հաջողությամբ իրականանալու համար անհրաժեշտ է, որ Հայերենի բարձրագույն խորհրդի կազմում գործի արևմտահայերենի եզրաբանական խորհուրդը, որն էլ կապահովի գրական երկու լեզուների մերձեցումը բառապաշարի ոլորտում:

ՕՖԵԼՅԱ ԽԱՉԱՏԻՅԱՆ